ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» փետրվարի 2015թ. N 49-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ[*3)] ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ *ՀՈՒՄՔ*[*1)] ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ում է.***

1. Հաստատել *Արցախի*[*3)] Հանրապետությունում գյուղատնտեսական *հումք*[*1)] վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի.

2. *Արցախի*[*3)] Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝

1) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ ամսվա 15-ը Արցախի[*3)] *Հանրապետության պետական եկամուտների կոմիտե*[*2),*7)] *ներկայացնել ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցում ստանալու նպատակով դիմած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ցանկը, իսկ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երրորդ ամսվա 1-ը՝ փաստացի իրականացված փոխհատուցումների վերաբերյալ տեղեկությունները.*[*1)]

2) մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 25-ը *Արցախի*[*3)] Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ սույն որոշման շրջանակներում իրականացված փոխհատուցումների մասին.

3) տվյալ տարվա *Արցախի*[*3)] Հանրապետության պետական բյուջեի մասին *Արցախի*[*3)] Հանրապետության օրենքով ավելացված արժեքի հարկի գումարը փոխհատուցելու նպատակով նախատեսված գումարները բավարար չլինելու դեպքում,

Արցախի[*3)] Հանրապետության կառավարություն ներկայացնել փոխհատուցման գումարների ավելացման վերաբերյալ առաջարկություն:

3. Արցախի[*3)] *Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին*[*7)]՝ *սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ցանկն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Արցախի*[*3)] *Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել տեղեկություններ՝ ցանկում ներառված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ճշտված ավելացված արժեքի հարկի հաշվարկի ներկայացման կամ ստուգման արդյունքում հարկային մարմին նախկինում ներկայացված հաշվարկով հայտարարագրված՝ բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի փոփոխության (բացառությամբ ստուգման արդյունքում ավելացված արժեքի հարկի պարտավորության ավելացման) մասին:*

Սույն կետում նշված ժամկետից հետո փոխհատուցում ստացած հարկ վճարողների կողմից փոխհատուցման ստացման ժամանակահատվածին վերաբերող ավելացված արժեքի հարկի ճշտված հաշվարկ ներկայացվելու կամ ստուգման արդյունքում հարկային մարմին նախկինում ներկայացված հաշվարկով հայտարարագրված բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի փոփոխության (բացառությամբ ստուգման արդյունքում ավելացված արժեքի հարկի պարտավորության ավելացման) դեպքում տեղեկությունները ներկայացվում են տասնօրյա ժամկետում:[*1),*2)]

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված[*1),*2)]
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի փետրվարի 12-ի
N 49-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱԽԻ[*3)] ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*1. Սույն կարգով կանոնակարգվում են Արցախի[*3)] Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հարկ վճարողներ) այդ արտադրանքի իրացումից Արցախի[*3)] Հանրապետության պետական բյուջե վճարած ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ), ինչպես նաև վերամշակման ընթացքում օգտագործված՝ Արցախի[*3)] Հանրապետության տարածք ներմուծված գյուղատնտեսական հումքի, չռաֆինացված ձեթի և յուղատու մշակաբույսերի սերմերից ու պտուղներից ստացված քուսպի[*9)] դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:*

*2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում Արցախի[*3)] Հանրապետությունում ոգելից խմիչքներ, ծխախոտ և հաց (լավաշ)[*3), *7)] արտադրող հարկ վճարողների վրա, ինչպես նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ միաժամանակ այլ գործունեություն իրականացնող հարկ վճարողների վրա, բացառությամբ ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող), ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող, առևտրի հարկով, հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) գույքի վարձակալության տրամադրման գործունեությունների իրականացման, ինչպես նաև հիմնական միջոցների օտարման դեպքերի:*

3. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

*1) **ԱԱՀ-ի գումարի փոխհատուցում՝** գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված արտադրատեսակների իրացումից և վերամշակման ընթացքում օգտագործված՝ Արցախի[*3)] Հանրապետության տարածք ներմուծված գյուղատնտեսական հումքի, չռաֆինացված ձեթի և յուղատու մշակաբույսերի սերմերից ու պտուղներից ստացված քուսպի[*9)] դիմաց Արցախի[*3)] Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեներ (այսուհետ՝ բյուջեներ) վճարված ԱԱՀ-ի գումարների չափով ԱԱՀ վճարողներին Արցախի[*3)] Հանրապետության պետական բյուջեից անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում.*

*2) **ԱԱՀ-ի գումարի փոխհատուցման միջոցառման մասնակից՝** ԱԱՀ-ի գումարի փոխհատուցմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմին՝ Արցախի[*3)] Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը և Արցախի[*3)] Հանրապետության տարածքում*

միայն գյուղատնտեսական հումք վերամշակող ու վերամշակումից ստացված արտադրատեսակները Արցախի[*3)] *Հանրապետության և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքներում իրացնող ԱԱՀ վճարողները: Փոխհատուցման միջոցառման մասնակից կարող է լինել նաև Արցախի*[*3)] *Հանրապետության տարածքում գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ միաժամանակ ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող), ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող, առևտրի հարկով, հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) գույքի վարձակալության տրամադրման գործունեություններ իրականացնող, ինչպես նաև հիմնական միջոցներ օտարած հարկ վճարողները.*

2.1) ***գյուղատնտեսության գործունեություն՝*** *գյուղատնտեսական մթերքների արտադրություն, փաթեթավորում, տարայավորում, պահեստավորում, տեղափոխում, շուկայահանում և դրանց առնչվող ծառայությունների մատուցում.*

2.2) ***գյուղատնտեսական հումք՝*** *գյուղատնտեսական գործունեության ընթացքում արտադրված բուսական կամ կենդանական ծագման հումք, որն աշխատանքի ազդեցությամբ կրել է որոշակի փոփոխություններ և ենթակա է հետագա վերամշակման, այդ թվում՝ բուսական ծագման գյուղատնտեսական հումքեր՝ յուղատու մշակաբույսեր (արևածաղիկ, սոյա, կտավատ և հլածուկ), հատիկային կուլտուրաներ՝ հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի վարսակ և աշորա), կորեկանման մշակաբույսեր (կորեկ, սորգո, եգիպտացորեն և բրինձ) և հատիկային մշակաբույսեր (հնդկացորեն), դեղաբույսեր, հատիկընդեղեն մշակաբույսեր, բանջարեղեն և կարտոֆիլ, պտուղ և հատապտուղ, կենդանական ծագման գյուղատնտեսական հումքեր՝ կաթ, կենդանի ձուկ, խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ, կենդանի վիճակում գտնվող գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ.*[*3)]

3) ***գյուղատնտեսական հումքի վերամշակում՝*** *անմիջականորեն գյուղատնտեսական հումքի վերամշակման տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում զգալիորեն փոփոխվում է գյուղատնտեսական հումքի ֆիզիկական և (կամ) քիմիական կազմը, ներառյալ վերամշակման արդյունքում ստացվող կողմնակի արտադրատեսակները՝ մարդկանց կողմից սպառման համար չնախատեսված:*

II. ԱԱՀ-Ի ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Փոխհատուցման տրամադրման հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամսական ԱԱՀ վճարողների համար՝ ամիսը, եռամսյակային ԱԱՀ վճարողների համար՝ եռամսյակը, իսկ կիսամյակային ԱԱՀ վճարողների համար՝ կիսամյակը:

5. ԱԱՀ վճարողները՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ ամսվա 10-ը Արցախի[*3)] *Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն են ներկայացնում դիմում՝ ԱԱՀ-ի գումարների փոխհատուցում ստանալու վերաբերյալ: Դիմումում պետք է նշվեն հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը), հաշվառման համարը, գործունեության իրականացման հասցեն, գործունեության տեսակը, արտադրվող ապրանքախմբի (ապրանքախմբերի) և ներմուծված գյուղատնտեսական հումքի, չռաֆինացված ձեթի և յուղատու մշակաբույսերի սերմերից ու պտուղներից ստացված քուսպի*[*9)] *անվանումները, որոնց կապակցությամբ*

անհրաժեշտ է կատարել ԱԱՀ-ի գումարների փոխհատուցում, ինչպես նաև տվյալ պահին փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարի չափը: Դիմումին պետք է կցվեն՝

1) իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) պետական գրանցման (հաշվառման) վկայականի պատճենը, իսկ ներմուծումը մասնաճյուղի միջոցով իրականացնելու դեպքում՝ նաև մասնաճյուղի հաշվառման վկայականի պատճենը, (ներկայացվում է միայն առաջին անգամ փոխհատուցում ստանալու նպատակով դիմելիս).

2) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկը՝ կնքված Արցախի[*3)] *Հանրապետության հաշվառման վայրի հարկային մարմնի կնիքով.*

3) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ներմուծում իրականացրած լինելու դեպքում՝ ներմուծման հայտարարագիրը՝ կնքված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի[*7)] [*7)] *կնիքով.*

4) ԱԱՀ-ի վճարումը հավաստող փաստաթղթերը.

5) հայտարարություն՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանները բավարարելու մասին.

6) սույն կարգի 14-րդ կետում նշված դեպքերում՝ Արցախի [*3)] *Հանրապետության հարկային մարմնի կողմից կազմված տեղեկանքը:*

6. Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

7. Արցախի[*3)] *Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո, առկա տվյալների հետ համաձայն լինելու դեպքում, ԱԱՀ-ի գումարի փոխհատուցման նպատակով տասնհինգօրյա ժամկետում Արցախի*[*3)] *Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի*[*9)] *նախարարություն է ներկայացնում համապատասխան բյուջետային ֆինանսավորման մասին հայտ՝ տվյալ տարվա Արցախի*[*3)] *Հանրապետության պետական բյուջեի մասին Արցախի*[*3)] *Հանրապետության օրենքով այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին փոխհատուցման գումարները վճարելու համար:*

8. Սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը թերի ներկայացվելու, ինչպես նաև փոխհատուցման պահանջը հիմնավորված չլինելու, այդ թվում՝ բյուջեներ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը վճարված չլինելու կամ մասնակի վճարված լինելու դեպքերում, Արցախի[*3)] *Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, դրանք ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում, դիմողին գրավոր հայտնում է դրա մասին: Դրանից հետո դիմողն իրավունք ունի սահմանված կարգով ներկայացնելու նոր դիմում:*

9. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված ժամկետից հետո[*3)], *ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրվում և փոխհատուցումն իրականացվում է առաջիկա հաշվետու ժամանակաշրջանի համար սահմանված փոխհատուցումների իրականացման ժամկետում: Փոխհատուցումներ չեն կարող իրականացվել, եթե դրանք վերաբերվում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:*[*3)]

10. Եթե սույն կարգով նախատեսված փոխհատուցումն ստանալուց հետո իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) և (կամ) մասնաճյուղի կողմից ներկայացվում է փոխհատուցման ստացման ժամանակահատվածին վերաբերող ԱԱՀ-ի ճշտված հաշվարկ (ամսական, եռամսյակային կամ կիսամյակային) կամ ճշտված ներմուծման հայտարարագիր կամ ստուգման արդյունքում փոխվում է Արցախի[*3)] *Հանրապետության հարկային մարմին ներկայացված հաշվարկով հայտարարագրված բյուջեներ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները, ինչի արդյունքում՝*

*1) համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար Արցախի[*3)] Հանրապետության հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով կամ Հայաստանի Հանրապետության հարկային մարմին ներկայացված ներմուծման հայտարարագրերով նախկինում հայտարարագրված բյուջեներ վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորությունը նվազում է փոխհատուցված գումարից, ապա փաստացի փոխհատուցված գումարի և ԱԱՀ-ի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով պակասեցվում է առաջիկա հաշվետու ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում) փոխհատուցման ենթակա գումարի չափը, իսկ փոխհատուցումը դադարեցված լինելու դեպքում՝ ենթակա է հարկ վճարողի կողմից վերադարձման Արցախի[*3)] Հանրապետության պետական բյուջե Արցախի[*3)] Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից ծանուցումը ներկայացվելուց հետո տասնօրյա ժամկետում.*

*2) համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար Արցախի[*3)] Հանրապետության հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով կամ Հայաստանի Հանրապետության հարկային մարմին ներկայացված ներմուծման հայտարարագրերով նախկինում հայտարարագրված բյուջեներ վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորությունն ավելանում է փոխհատուցված գումարից, ապա կատարվում է փոխհատուցվող գումարի չափի վերահաշվարկ (բացառությամբ ստուգման արդյունքում ԱԱՀ-ի պարտավորության ավելացման), որը վճարվում է առաջիկա հաշվետու ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում) փոխհատուցման ենթակա գումարի հետ միաժամանակ, իսկ փոխհատուցումը դադարեցված լինելու դեպքում՝ վճարվում է հարկ վճարողին մեկամսյա ժամկետում:*

*11. Սույն կարգով նախատեսված փոխհատուցումը ստանալուց հետո Արցախի[*3)] Հանրապետության տարածք ներմուծված գյուղատնտեսական հումքը, չռաֆինացված ձեթը և յուղատու մշակաբույսերի սերմերից ու պտուղներից ստացված քուսպը[*9)] հարկ վճարողի կողմից օտարելու կամ դրանցից[*9)] պատրաստված արտադրանքը արտահանելու դեպքում, հարկ վճարողը մինչև տվյալ հաշվետու ժամանակահատվածին հաջորդող երկրորդ ամսվա 10-ը հայտարարություն է ներկայացնում Արցախի[*3)] Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ տասնօրյա ժամկետում Արցախի[*3)] Հանրապետության պետական բյուջե վերադարձնելով ավել վճարված փոխհատուցման գումարը:*

*12. Սույն կարգի 5-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերում կեղծ տեղեկություններ հայտնաբերելու դեպքում, Արցախի[*3)] Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը իրավասու է դադարեցնել փոխհատուցումը: Փոխհատուցումը դադարեցվում է նաև հարկ վճարողի կողմից սույն կարգի 11-րդ կետով նախատեսված Արցախի[*3)] Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն հայտարարություն կամ 13-րդ կետով նախատեսված դեպքերում Արցախի[*3)] Հանրապետության հարկային մարմին դիմում չներկայացնելու կամ սխալ տեղեկություններ ներկայացնելու համար:*

*13. Փոխհատուցման ժամանակաշրջանին վերաբերող հաշվետու ժամանակաշրջանում «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանային չափերը գերազանցելու և (կամ) գույքի վարձակալության տրամադրման և (կամ) հիմնական միջոցների օտարման դեպքերում, հարկ վճարողը պարտավոր է դիմել Արցախի[*3)]*

Հանրապետության հարկային մարմնին՝ ըստ գործունեության տեսակների ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և Արցախի[3)] *Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների ուսումնասիրություն անցկացնելու նպատակով:*

14. Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Արցախի[3)] *Հանրապետության հարկային մարմինը հարկ վճարողի մոտ իրականացնում է ուսումնասիրություն և կազմում տեղեկանք՝ ըստ գործունեության տեսակների ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեծությունների վերաբերյալ:*

15. Արցախի[3)] *Հանրապետության հարկային մարմինը, ըստ անհրաժեշտության, օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և հաշվարկված ու բյուջեներ վճարված ԱԱՀ-ի գումարների ուսումնասիրություններ նաև սույն կարգի 13-րդ կետում չնշված դեպքերում և արդյունքները ներկայացնել Արցախի*[3)] *Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:*

16. Սույն կարգի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջը տարածվում է 2015 թվականի ապրիլի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով փոխհատուցումների տրամադրման գործընթացի վրա: Հարկ վճարողների կողմից հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում ԱԱՀ-ով հարկվող այլ գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն կարգով սահմանված փաստաթղթերի հետ միաժամանակ, ներկայացվում է նաև Արցախի[3)] *Հանրապետության հարկային մարմնի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանք՝ ըստ գործունեության տեսակների՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և Արցախի*[3)] *Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեծությունների վերաբերյալ:*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

---

*1) ԼՂՀ կառավարության 17.04.15թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 226-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:)

*2) ԼՂՀ կառավարության 19.11.15թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 767-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերությունների վրա:)

*3) ԱՀ կառավարության 11.03.19թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 137-Ն որոշման խմբագրությամբ: (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը):

Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված ժամկետում չներկայացված փաստաթղթերը կարող են ներկայացվել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, բացառությամբ եթե դրանք վերաբերվում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:

*Եթե սույն որոշումը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնց հետևանքով պետք է դադարեցվի մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը փոխհատուցում ստացած հարկ վճարողներին փոխհատուցումների տրամադրումը, ապա մինչև 2022[*6), *8)] թվականի[*5)] դեկտեմբերի 31-ը ներառյալ կիրառվում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող դրույթները:[*4)]*

*4) ԱՀ կառավարության 21.08.19թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 682-Ն որոշման խմբագրությամբ:

*5) ԱՀ կառավարության 26.05.20թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 5-Ն որոշման խմբագրությամբ:

*6) ԱՀ կառավարության 04.06.21թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 589-Ն որոշման խմբագրությամբ:

*7) ԱՀ կառավարության 16.02.22թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 128-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:):

*8) ԱՀ կառավարության 21.02.22թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 157-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 31-ից ծագած հարաբերությունների վրա:):

*9) ԱՀ կառավարության 04.04.22թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 360-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետի (7-րդ կետում «ֆինանսների» բառից հետո լրացնել «և էկոնոմիկայի» բառերը):):